# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ – ԲԵՄԱԿԱՆՔ

* Կիր. 2 Փետր.— Բարեկենդան Առաջաւորի Պահոց: Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պատարագեց Հոգշ. Տ. Սիփան Աբղ. Մխսեան:

* Շբ. 8 Փետր.— Ս. Սարգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի հնդարեան մատրան մէջ, ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նաջարեան: Ս. Պատարագէն ետք, բնիկներու աւանդութեան համաձայն, կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ Ս. Աթոռոյս եւ ազգիս հանգուցեալ մեծանուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի հօր՝ Սարգսի հոգւոյն համար, անոր անուան տօնին առթիւ: Արարողութեան նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Կիր. 9 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: ժամարարն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան:

— Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ պատարագեց ու քարոզեց տեղւոյն հովիւ Հոգշ. Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Գալստեան:

* Կիր. 16 Փետր.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Աբղ. Ղարիպեան:

* Դշ. 19 Փետր.— Վարդանանց հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Եշ. 20 Փետր.— Ս. Վարդանանց Զօրավարաց մերոց 1036 վկայիցն (Յիշատակ մեռելոց եւ տօն ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց, ըստ սովորութեան, Ժառանգ. Վարժարանի եւ Ընծայարանի Փոխ-Տեսուչ՝ Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան, որ եւ խօսեցաւ վարդապետական իր անդրանիկ քարոզը, «Փոխանակեալ զանձնասիրութիւնս ընդ ճշմարիտ յաւէտ անմահութեան» բնաբանով, անդրադառնալով Վարդանանց ճակատամարտի բարոյական յաղթանակով պսակուելու հանգամանքին վրայ: Յետ քարոզի, նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք.ի, կատարուեցաւ «Հայրապետական Մաղթանք», Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի անուան տօնին առթիւ, իսկ Ս. Պատարագի աւարտին, զարձեալ նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազանին, հոգեհանգստեան պաշտօն, Աւարայրի հերոսներու յիշատակին: — Այս տօնը ժառանգաւորաց տօնը նկատուած ըլլալով, ժառ. սաներ իրենց մէջէն ընտրուած դպիրներով ղեկավարեցին երգեցողութիւնները:

* Ուր. 21 Փետր.— Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ուղղափառ Ասորւոց Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցիին մէջ, ժամարարն էր Հոգշ. Տ. Նարեկ Աբղ. Մարգարեան: Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորւոց Գերշ. Եպիսկոպոսէն: Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան, որ պատմական տեղեկութիւններ տուաւ Սրբավայրին մասին:

* Շբ. 22 Փետր.— Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն 150 հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր, ժամարարն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան:

— Ըստ սովորութեան, երեկոյեան ժամերգութեան ընթացքին կատարուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի խորաններուն եւ գլխաւոր սրբանկարներուն վարագուրումը:

* Կիր. 23 Փետր.— Բուն Բարեկենդան: Փակման խորանի Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: ժամարարն էր Հոգշ. Տ. Գարեգին Վրդ. Երէցեան: Ըստ սովորութեան, Դպրապետի պաշտօնը կը վարէր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Բշ. 26 Փետր.— Սկիզբ կարգաց Մեծի Պահոց: Առաւօտուն Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Արեւագալ»ի առաջին ժամերգութիւնը:

— Կէսօրէ ետք, Տեառնընդառաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ, որուն աւարտին կատարուեցաւ «Անդաստան»: Արարողութեանց կը նախագահէր հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Եւրոպայի Թեմին Կաթող. Պատուիրակ եւ Ս. Ուխտիս Միաբան Գերշ. Տ. Սերովբէ Արքեպս. Մանուկեան:

— Գիշերուան կէսին Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»ի եւ հսկման արարողութիւններ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան:

— Հսկումէն ետք, Ժառանգաւորաց Վարժարանի մարզադաշտին վրայ կը վառէր Տեառնընդառաջի աւանդական կրակը, որուն շուրջը ժողովուրդը ապրած էր խրախճանական տեսարաններ:

* Եշ. 27 Փետր.— Տեառնընդառաջ: (Տօն Քառասնօրեայ Գալստեանն Քրիստոսի ի Տաճարն): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան: Քարոզեց Գերշ. Տ. Սերովբէ Արքեպս. Մանուկեան, որ անդրադառնալէ ետք Հայ Երուսաղէմի գաղթաշխարհի մէջ կատարած մեծ եւ անգնահատելի դերին, յորդորեց ներկաները որ, Սիմէոն Ծերունիին նման, նուիրուին ոգիով բոլորուին սրբազան այս Հաստատութեան շուրջ:

* Ուր. 28 Փետր.— Կէսօրէ ետք, Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցիին մէջ (որ նոյն ատեն Ձեռագրատունն է Ս. Աթոռոյս) պաշտուեցաւ առաջին Մեծ Պահոց «Խաղաղական ժամերգութիւն»ը եւ ապա Ս. Թէոդորոսի նախատօնակ, հանդիսապետութեամբ Ձեռագրատան Տեսուչ Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեանի:

* Շբ. 1 Մարտ.— Ս. Թէոդորոսի զօրավարին: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի Ձեռագ-

digitised by A.R.A.R.@

բատան՝ Ս. Թորոս եկեղեցիին մէջ. ժամարարն էր Հոգշ. Տ. Ադամ Արք. Գալֆայեան։

— Վաղուան Արտաքսման Կիրակիի առթիւ, կէսօրէ ետք ժամը 3ին, Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Նախատօնակը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։

* Կիր. 2 Մարտ.— Արտաքսման Կիրակի։ Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ մեծահանդէս Թափօր Երիցս Ս. Գերեզմանին եւ Գողգոթայի շուրջ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր։

* Գշ. 4 Մարտ.— Երեկոյեան, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Եկեսցէ»ի առաջին ժամերգութիւնը։

* Դշ. 5 Մարտ.— Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Մեծ Պահոց «Ճաշու»ի առաջին ժամերգութիւնը։

— Երեկոյեան սկսան նաեւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին Մեծ Պահոց Խոկումները, նախագահութեամբ վանքի նոր Տեսուչ Հոգշ. Տ. Նարեկ Արք. Մարֆաղէլեանի։

* Եշ. 6 Մարտ.— Իրիկուան Խոկումին քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս, անդրադառնալով ապաշխարութեան եւ պահեցողութեան օգուտներուն, մարդուն հոգեւոր, մտաւոր եւ ֆիզիքական կեանքի բարօրութեան տեսակէտէն։ Մատնանշեց Աւետարանի Մաքսաւորը իբրեւ զղջումի եւ ապաշխարութեան տիպար մը, հակադրաբար Փարիսեցիին ցուցամոլութեան։

* Շբ. 8 Մարտ.— Ս. Կիւրղի Երուսաղիմայ Հայրապետին։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւանդատան Ս. Կիւրղի Սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Սիփան Արք. Մխսեան։

* Կիր. 9 Մարտ.— Անառակի Կիրակի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան։ Քարոզեց Գերշ. Տ. Նորայր Եպիսկոպոս, մեկնաբանելով Անառակի աւետարանական առակը։ Ծանրանալով ներողամտութեան զգացումին վրայ, մատնանշեց զայն իբրեւ մարդերու եւ ժողովուրդներու միջեւ խաղաղութիւն ապահովող կարեւորագոյն ազդակներէն մին։ Ներկայ էր նաեւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ Ս. Պատարագէն ետք նախագահեց Տքթ. Վ. Գալպեանի մահուան քառասունքի հոգեհանգստեան։

— Փակեալ-խորանի Ս. Պատարագ մատուցուեցաւ Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ։ Պատարագեց Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան. Քարոզեց Տեսուչ Տ. Յուսիկ Ծ. Վրդ. Գալստեան, մատնանշելով իրերօգնութեան ոգին, զգացումին կարեւորութիւնն ու բարիքները։

* Եշ. 13 Մարտ.— Իրիկուան Խոկումին քարոզեց Գերշ. Տ. Շահէ Եպիսկոպոս, բնաբան ունենալով Սաղմոսին հետեւեալ խօսքը. «Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ»։ Փարիսեցիին եւ Մաքսաւորին առակով բացատրեց անօրէնութեան եւ մեղքին տարբերութիւնը եւ յայտնեց թէ մարդ կ'արդարանայ ո՛չ թէ չարիքէն հեռու կենալով միայն, այլ մանաւանդ բարիք գործելով։

* Կիր. 16 Մարտ.— Տնտեսի Կիրակի։ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Յովհաննու Կարապետի խորանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։ Քարոզեց Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբիկեան, մեկնաբանելով Տնտեսի աւետարանական առակը։

* Եշ. 20 Մարտ.— Երեկոյեան Խոկումին քարոզեց Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր, Պատմականն ըրաւ ու բացատրեց Մեծ Պահոց եօթը շաբաթներու ընթացքը, շեշտեց մանաւանդ ապաշխարութեան եւ զղջումի խոհական ըմբռնման անհրաժեշտութիւնը մեղաց քաւութեան մարդուն մէջ։

* Ուր. 21 Մարտ.— Սեբաստիոյ Քառասուն Մանկանց նախօրեակի առթիւ մասնաւոր Խոկում կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետս, ուր վանքի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Նարեկ Արք. Մարֆաղէլեան խօսեցաւ [illegible] սուրբերուն մասին, անոնց նահատակութենէն օրինակելի դասեր հանելով ժողովուրդին։

* Շբ. 22 Մարտ.— Ս. Քառասուն Մանկանցն Սեբաստիոյ։ Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. [illegible] մատրան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Նարեկ Արք. Մարֆաղէլեան։ Վերաբերումը կատարուեցաւ Ս. Քառասուն Մանկանց նկարին առջեւ հաստատուած շարժական Սեղանին վրայէն, որուն դիմաց, կաթսայի մը մէջ, կը պզզային քառասուն [illegible] կանթեղներ, ուխտական [illegible] լինելի [illegible]։

— Վաղուան Ծաղկազարդի Կիրակիի առթիւ կէսօրէ ետք ժամը 2.30ին Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար։ Ս. Գերեզմանի եւ Գիւտ Խաչի Այրի ուխտերէն ետք, Թափօրը բարձրացաւ վերջնոյս կից Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Նախատօնակը։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

* Կիր. 23 Մարտ.— Ծաղկազարդի Կիրակի։ Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Լուսաւորիչ։ Ապա, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Երիցս Ս. Գերեզմանին վրայ, որմէ ետք նախագահեց Նոյնին եւ Գողգոթայի շուրջ կա-

digitised by A.R.A.R.@

տարուած մեծահանդէս թափօրին։ Ս. Պատարագի արարողութիւնները ձայնասփռուեցան Իսրայէլեան ռատիոկայանէն։

* Դշ. 26 Մարտ.— Ի Ս. Հրեշտակապետ պաշտուած հսկման ընթացքին, Հոգշ. Տ. Սիփան Արք. Մխեան կարդաց իր անդրանիկ քարոզը, ուր անդրադարձաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի կեանքին ու գործունէութեան

* Եշ. 27 Մարտ.— Իրիկուան հսկումին է Ս. Յակոբ քարոզեց Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեան, բնաբան ունենալով. «Յոյս իմ ես դու, Տէր, քաւիչ յանցանաց իմոց»։

* Ուր. 28 Մարտ.— Ս. Գրիգորի Լուսաւորչի Մուտն ի Վիրապ տօնին առթիւ, առաւօտեան ժամերգութեան աւարտին, Սուրբին մասունքը թափօրով փոխադրուեցաւ Աւագ Սեղան, ձեռամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի։ Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Լուսաւորչի Սեղանին վրայ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան։

— Կէսօրէ ետք, Միաբանութենէն մաս մը, գլխաւորութեամբ Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նալպանտեանի, ինքնաշարժներով բարձրացաւ Ձիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբատեղիին վրայ պատրաստուած մեր վրանամատրան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ։

— Իրիկնադէմին կատարուեցան «Ննջեցէք»ի եւ հսկման կարգեր ու ապա գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններ, որոնց աւարտին Ս. Պատարագ մատուցուեցաւ Համբարձման մատրան մէջ։ Ժամարարն էր, ըստ սովորութեան, Սրբավայրին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սիփան Արք. Մխեան։ Արարողութիւնները տեւեցին մինչեւ գիշերուան ժամը 11։

* Կիր. 30 Մարտ.— Գալստեան Կիրակի։ Առաւօտուն, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով բարձրացան Ձիթենեաց լեռ ու «Հրաշափառով» մուտք գործեցին Համբարձման Սրբավայրը, ուր մեր վրանամատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նալպանտեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ։

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

* Բշ. 17 Մարտ.— Անգլիքան նոր Եպիսկոպոս Գեր. Տ. Ճորճ Աբբէլթընի Երուսաղէմ ժամանումին առթիւ Սէնթ Ճորճ Եկեղեցիին մէջ կատարուած աթոռակալութեան արարողութեան եւ անոր յաջորդող ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս եւ Տիար Կարապետ Հինդլեան։

* Կիր. 23 Մարտ.— Կէսօրէ ետք, Սէնթ Ճորճ Եկեղեցիին մէջ կատարուած Անգլիքան նոր Եպիսկոպոսի գահակալութեան հանդիսութեանց ներկայ գտնուեցաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը։

* Դշ. 26 Մարտ.— Նազարէթի Լատինաց նորաշէն Աւետման Եկեղեցւոյ մէջ արարողութեանց եւ անոնց յաջորդող ճաշկերոյթին ներկայ գտնուեցաւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Արշէն Վրդ. Այվազեանի եւ Հոգշ. Տ. Աղան Արք. Պալիօզեանի։

* Գշ. 8 Ապրիլ.— Եւրոպացւոց Ս. Զատկի տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը ի գլուխ Միաբանութեան այցելեց Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին եւ Ֆրանչիսկեանց Կուսթոս Գերշ. Փոխանորդին։ Ապա, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Շահէ Եպս.ի և Տիար Կարապետ Հինդլեանի, այցելեց Պապական Նուիրակին, Անգլիքան Արքեպս.ին եւ Արաբ-Անգլիքան Եպիսկոպոսին։ Իսկ Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ., ընկերակցութեամբ Հոգշ. Հայրերու, այցելեց Յոյն-Կաթոլիկներու Եպիսկոպոսին, Հայ-Կաթոլիկ և Մարոնիթ համայնքի Մեծաւորներուն եւ Լուտերականներու ու Արաբ Լուտերականներու Երէցներուն։

* Բշ. 14 Ապրիլ.— Մեր Ս. Զատկի տօնին առթիւ, Իսրայէլ Նախագահութեան ներկայացուցիչ Պր. Շմուէլ Թոլէտանօ, ընկերակցութեամբ Ռաբբանապետին եւ իր օգնականներուն, այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր։ Այցելութեան եկաւ նմանապէս Երուսաղէմի Քաղաքապետ Ն. Վսեմ. Պր. Թէտի Քոլլէք, ինչպէս նաեւ Անգլիքան նոր Արքեպիսկոպոսը եւ Արաբ-Անգլիքան Եպիսկոպոսը։

* Գշ. 15 Ապրիլ.— Մեր Ս. Զատկի տօնին առթիւ, առաւօտեան ժամը 10 – 12, մեր Պատրիարքարանը շնորհաւորական այցի եկան յաջորդաբար Ֆրանչիսկեանց Գերշ. Կուսթոսը, Ղպտոց, Ասորւոց, Հաբէշաց եւ Յոյն-Կաթոլիկներու Եպիսկոպոսները, իրենց միաբանութեան անդամներով։ Այցելութեան եկաւ նոյնպէս քաղաքիս Հիւպատոսական ամբողջ կազմը։

— Իսկ Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ., ընկերակցութեամբ Հոգշ. Հայրերու, այցելեց Ղպտոց, Ասորւոց եւ Հաբէշաց Եպիսկոպոսներուն։

— Նոյն օրը կէսօրէ ետք, Ռամալլայի Լատինաց Եկեղեցւոյ մէջ, Հոգշ. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Գաբիկեան, ընկերակցութեամբ Տիար Կարապետ Հինդլեանի, ներկայ գտնուեցաւ նախորդ օր յանկարծամահ եղած Լատինաց Պատրիարքարանի Կրօնական Ատեանի Նախագահ Գերշ. Մոնս. Ճորճ Գաթէհի հոգւոյն համար Լատինաց Պատր. Փոխանորդ Մոնս. Գիլթրիթթիի կողմէ մատուցուած հանգստեան հանդիսաւոր Պատարագին եւ յուղարկաւորութեան տխուր արարողութեան։

digitised by A.R.A.R.@